Արձանագրություն N 2
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բացման նիստի

ք. Երևան

14 դեկտեմբերի 2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ Ա. Օհանյան, Ն. Ավետյանը, Ա. Սիմոնյանը և Ս. Նազարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Արփա-Սևան թիվ 2 թունելի վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով պետք է տեղի ունենար 06.12.2021 թվականին ժամը 16:00-ին: Սակայն Armeps համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել սահմանված ժամին իրականացնել հայտերի բացումը: ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել և հաշվի առնելով, որ վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում, ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունն առկա է համակարգում՝ առաջարկել է գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Երվադա» ՍՊԸ	ք. Երևան, Արին Բերդի 3/4 091 11 11 34	ervada-spy@mail.ru
«Արփա-Սևան» ԲԲԸ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 20 012 21 11 11	a_ghazaryan@arpa-sevan.am
«Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 9/9 055 443355	davo84am@gmail.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք – 1 592 826 910 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/				

Արփա-Սևան թիվ 2 թունելի վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ				
1	«Երվադա» ՍՊԸ	1 000 000 000	200 000 000	1 200 000 000
2	«Արփա-Սևան» ԲԲԸ	1 838 163 581	367 632 720	2 205 796 301
3	«Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ	3 904 637 587.2	780 927 517.44	4 685 565 104.64

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «Երվադա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված չէ ծավալաթերթ – նախահաշիվը:

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող մյուս փաստաթղթերը մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 և 8.10 կետերը 14.12.2021թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով մասնակից «Երվադա» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 15.12.2021թ. ժամը 18:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ _____ Ա. Օհանյան

_____ Ն. Ավետյան

_____ Ա. Սիմոնյան

_____ Ս. Նազարյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան